Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՊՐԱԿՏԻԿԱ** **/արվեստանոցային ժամ/** **(7.20ՃՆԽ013)**
ECTS կրեդիտ	8 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • հիմնավորել ուսումնասիրվող առարկայի նորույթը, արդիականությունը, նպատակը և խնդիրները, • մշակել ստացված տվյալները նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործման համար, • տիրապետել տարբեր լեզուների՝ հատուկ գրականության ուսումնասիրության համար, • ծանոթանալ ուսումնասիրվող թեմայի գրականությանը՝ նորմատիվ պահանջների և տվյալների, գիտահետազոտական, բնօրինակային, արխիվային նյութերի հավաքագրման, համակարգման և ամփոփման համար, • կատարել մշակված նյութի հիման վրա աշխատանքի բովանդակության, կազմի և անվանման ճշտումներ, որոշել թեմայի ուսումնասիրության ուղղությունը, *(կարողություններ)* • առաջարկել և մշակել ուսունմասիրության նոր մոդելը՝ ելնելով գոյություն ունեցող հետազոտության խնդիրներից, • ապահովել նախագծվող ճարտարապետական կառույցների բարձր էկոլոգիական, էներգաարդյունավետ լուծումներ՝ միջազգային փորձի հիման վրա, • մշակել ընտրված թեզի վերաբերյալ հիմնական գիտական կոնցեպցիան՝ հաշվի առնելով գոյություն ունեցող գիտական ուսումնասիրությունները:
Պրակտիկայի նկարագրություն	ՃՇՀԱՀ-ի «ճարտարապետություն» մասնագիտության կրթության մագիստրատուրայի 1-ին կուրսի արտադրական պրակտիկան հանդիսանում է ճարտարապետական ուսուց-

	ման վերջնական փուլը, որը նախատեսվում է կազմակեր-պել ուսանողների տեսական և գործնական ուսուցումից և մագիստրոսական թեզի ընտրությունից հետո: Պրակտիկայի նպատակն է մագիստրոսական թեզի ձևակերպման համար կատարել անհրաժեշտ նյութի հավաքագրում, վերլուծություն, ամփոփում, դասակարգում, որը զարգացնում է ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ինքնուրույն կատարման ունակությունները: Ուսումնասիրվող նյութը ապահովում է գործնական աշխատանք՝ նախագծի գրագետ մշակումը և վերջնական ձևավորումը: Արտադրական պրակտիկայի տևողությունը 7 շաբաթ է, որի վերջում ուսանողները ներկայացնում են հաշվետվու-թյուն կատարած աշխատանքի վերաբերյալ, մոտ 10-15 էջի սահմաններում և գնահատվում՝ ըստ 20 բալային համա–կարգի: